

E. H. Wright - Suburban

26 Squaring

89171.092

S-66

092

ԼԵՒ ՏՕԼՍՕՑ



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Շ Կ Ն Ո Ր Կ

391.71.092

0-66

19 NOV 2010

№ 82 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԳՐԻՐ-ՏԱՐԱԶԻ № 82


Կ Ա Ջ Մ Ե Յ

Աղբիւրի աշխատակից

Ն. Ա. ՍՕՂՕՎԵՒ - ՆԷՍՄԷՂՕՎ


Կ Ե Ն Ս Ա Գ Ի Ր Ա Կ Ա Ն
Ա Կ Ն Ա Ր Կ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ
ԱԿՆԱՐԿ



Ք Ի Յ Լ Ի Ս
Արագածիկ «Էսպերանցո» Ելիզաբետինսկայա № 17.
1910 թ.

ԼԵԻ ՏՕԼՍՏՅ




ՎԵՐՁԻՆ ԶՐՈՅՅԸ

Աշխարհում միլիոնաւոր մարդիկ կան, շատերն են տանջուում, ինչո՞ւ դուք բոլորդ այստեղ միայն ինձ մօտ էք:

ԼԵԻ ՏՕԼՍՏՅ

Աստապօֆօ,

Շաբաթ, 1910 թ. 6 նոյեմբ. 11 ժ. 16 ր. գիշերայ:



ԼԵԻ ՏՕԼՍՏՅ

Յուզելով, յափշտակելով, տարակուսելով, ուրախանալով, տանջելով, թափանցելով իր նօզու խորքը, նա թափանցեց մարդկանց նօզիները, կենդանագրեց նրանց՝ ցոյց տալով, թէ ի՞նչ են նրանք եւ ի՞նչ պիտի լինին:

Ն. Ա. ՍՕԼՈՎԻՆԻ-ՆԵՍՏԵՆՈՎ.

Տույա նահանգական քաղաքից տաննհինգ վերստի վրայ գտնուում է մի հինաւուրց իշխանական կալաքը-Նասուայա Պօլեանա անունով:

Այդ կալաքը գեղանկար դիրք ունի, շրջապատւած լինելով մեծ, հինաւուրց անտառով:

Կալաքատիրոջ տունը շրջապատւած է դարաւոր լորենիներով. նրա մօտ գտնուում են չորս հատ փոքրիկ արհեստական լճակներ եւ անխնամ թողած մի հին պարտէզ, որի շուրջը հողաթումբ է քաշած: Հինաւուրց սիւնազարդ, ամրոցանման մեծ տունը՝ իր բազմաթիւ սենեակներով՝ վաղուց այրել է, եւ նրա աւերակների մօտ հիմա կանգուն են երկու կողմնակի շինութիւն. դրանցից մէկը երկյարկանի է, եւ վայրի յարկում տեղաւորուում է տանտիրոջ առանձնասենեակը, գրադարանը եւ ննջարանը:

Առանձնասենեակում դրւած է հասարակ գրասեղան, մի քանի աթոռ, բազմոց եւ գրքերի համար դարակ, պատերից կախւած է մի քանի պատկեր: Գրադարանը շատ հարուստ է եւ լի զանազան գրքերով՝ գրւած այն եօթը լեզուներով, որոնց ազատ տիրապետում է տանտէրը:



Տանտիրոջն ամենից յաճախ կարելի է տեսնել իր առանձնասենեակում, հագած հասարակ, կապոյտ վերնաշապիկ, երկար կոշիկներ—կամ խորասուղւած ընթերցանութեան մէջ, կամ խոշոր ձեռագրով գրելիս, կամ զբոյց անելիս իր մերձաւոր ու ծանօթ այցելուների հետ: Իսկ հանճարեղ գրող Լև Նիկոլայիչը Տօլստոյն է:

Տօլստոյի մասին լսած կամ կարդացած բոլոր լուսաւոր կամ գրաճանաչ մարդիկ լսած կը լինին նաև Նասնայա Պօլեանայի մասին, որտեղ նա ծնւել է, անց է կացրել իր մանկութիւնը և իր երկար կեանքի մեծ մասը՝ շարունակ աշխատելով իր հասարակ առանձնասենեակում, որտեղ նա ստեղծագործել է իր նշանաւոր գրւածքները, որոնցից շատերը կծայրեն ոչ միայն հարիւրաւոր տարիներ, այլև այնքան ժամանակ, որքան կապրի հարուստ ու պատկերաւոր, կենդանի և ուժեղ ուսու լեզուն:

Նասնայա Պօլեանայում Տօլստոյը աշխատում է ոչ միայն փակւած իր հասարակ, բայց և հռչակաւոր առանձնասենեակում, այլ նա սիրում է նաև Ֆիզիկական աշխատանք, որ եռանդ ու կորով է տալիս նրա ամրակազմ մարմնին և պայծառութիւն՝ նրա ստեղծագործող մտքին: Նա իր համար աշխատանք է գտնում թէ հայրենի անտառում և թէ իր սրտին մօտ գիւղական խրճիթում: Զրնայած որ այդ մեծ մարդուն բնութիւնը շատ առատ է պարգևատրել, բայց և այնպէս նա իր տղանգը տանապատկել է աշխատանքով և արդարութեան ու ճշմարտութեան յաւիտենական որոնումներով:

Նրա կեանքն ու գործերը շատ խրատական կողմեր ունին. նրա մասին շատ են գրում ու խօսում թէ երկրպագուներից ու յարգողներից և թէ թշնամիներից:

Ահա այդ շատ գրած ու խօսածներից և հէնց Տօլստոյի իր պարզ ու անկեղծ գրութիւններից օգտւելով մենք կը փորձենք շատ համառօտ պատկերացնել այդ մեծ մարդու և հեղինակի առանձնայատուկ կեանքը:

*
*
*

Տօլստոյը ծագում է հին ու անւանի տոհմից: Նրա պապը Պետրոս Մեծի մտերիմն է եղել, եղել է դեսպան Կ. Պօլսում: Տօլստոյների հեռաւոր նախահայրը պրուսացի գաղթական է եղել, ազգանունը Dick—«հաստ», որից և առաջացել է ուսական Տօլստոյ ազգանունը: Ուրեմն ուս

ամենամեծ գրողի—Տօլստոյի մէջ էլ հօր կողմից օտար արիւն կայ: Մայրը՝ նշանաւոր Վօլիօնսկի տոհմիցն է, մեծ մայրերից մէկը իշխ. Գօրչակովներից է, իսկ միւսը՝ Տրուբեցկոյներից: Վօլիօնսկիներն ու Գօրչակովները ուղիղ գծով ծագում են Ռուս պետութեան հիմնադիր և առաջին իշխանապետ Րիուրիկից:

Լ. Ն. Տօլստոյ արտաքինով շատ նման է իր պապ իշխ. Վօլիօնսկուն, իր մօր հօրը: Բարձր ճակատ, խիտ ու կիտւած յոնքեր, որոնց տակից փայլում են խորաթափանց, մանր ու խոր ընկած մոխրագոյն աչքերը:

Լ. Ն. Տօլստոյի հայրը՝ ժառանգութիւն ստանալով քայքայւած կալւածք և բաւական մեծ պարտք՝ չէր կարող բաւականանալ իր սպայական սոճիկով, ուստի ազգականների խորհուրդով ամուսնացաւ հասակն անցկացրած ու տգեղ իշխանագնուհի Մարիա Նիկոլայիւնա Վօլիօնսկայի հետ, որ հարուստ իշխանական տան միակ ժառանգուհին էր. ապա նա պաշտօնը թողեց ու բնակութիւն հաստատեց իր կնոջ կալւածքում—Նասնայա Պօլեանայում:

Ահա այստեղ, Նասնայա Պօլեանայում, ութսուն երկու տարի առաջ, 1828 թւի օգոստոսի 28-ին, ծնւում է Լ. Ն. Տօլստոյը: 1831 թ., երբ նա նոր էր լրացրել երեք տարին, մեռնում է նրա մայրը: Վեց տարի յետոյ վախճանւում է նաև հայրը: Այդպիսով իննը տարեկան հասակից մանուկ Տօլստոյը բոլորովին որբ է մնում:

Հարստութիւնն էլ չի կարող որբին ուրախացնել. որբը միշտ էլ որբ է, ինչ պայմաններում էլ լինի: Իսկ այնպիսի սպաւորւող, նեարդային ու մտորող մանկան համար, ինչպիսին Տօլստոյն էր, երեք տարեկան հասակից մայրական քնքոյշ զգացմունքից զրկելը շատ զգալի էր: Ինչպէս երևում է նրա գրւածքների այն կտորներից, որոնցում նա արեւատօրէն նկարում է իր մօր պատկերը, նա սիրում էր իր մօրը ջերմագին, քնքոյշ ու խորունկ սիրով: Ի միջի այդոց նա իր մօրը պատկերացրել է «Պատերազմ եւ խաղաղութիւն» խորագրով յայտնի բազմահատոր անմահ գրւածքում (Իշխանագնուհի Մարիա Վօլիօնսկայա):

Փոքր հասակից որբ մնալով՝ Տօլստոյը մանկութիւնից սկսած ապրում է իր վաղամեծ մօր թողած կենդանի յիշողութիւններով: Նա իր «Մանկութիւն» անունով յայտնի

գրւածքում շատ սրտաշարժ տողեր է նւիրել իր մօրը*), անկասկած, ուրիշների պատմածների համաձայն:

Մայրական սիրոյ մեծ նւիրական զգացմունքը միշտ թանկ է եղել մեծ գրողի համար, և նա իր մօր թանգագին յիշատակին իր երկերի մէջ նւիրել է շատ հրաշալի էջեր՝ սկսած «Մանկութիւն» գրւածքից, որն իր պարզութեամբ ու անկեղծութեամբ գրւում ու յափշտակում է ամեն մի ընթերցողի, ինչ հասակի էլ լինի նա:

1837 թ. Տօլստօյների ամբողջ ընտանիքը Եսանայեա Պօլեանայից տեղափոխւում է Մոսկւա, որտեղ մեծ որդին պիտի պատրաստէր ու մտնէր համալսարան, բայց հայրը յանկարծակի վախճանում է, թողնելով իր տնտեսական գործերը շատ խճճւած դրութեան մէջ: Խնայողութեան համար փոքր երեխաները, որոնց թւում և մանուկ Լևը նորից վերադառնում են Եսանայա Պօլեանայ:

Այստեղ երեխաներին սովորեցնում էին գերմանացի դուկէրներ (անային դաստիարակներ) և ուսուսմինարիստները: Մանուկ Տօլստօյի վրայ այդ դուկէրներօրներից ամենից մեծ տպաւորութիւն թողել է մի գերմանացի, որին նա անմահացրել է Կարլ Իվանովիչ անունով իր «Պատանեկութիւն» գրքի մէջ:

Տօլստոյը հէնց մանուկ հասակից շատ դիտող էր. նա ամեն բան նկատում էր, վերլուծում, ամփոփում ու թէև մանուկ հասակում շարժուն ու շարճճի, կենդանի ու աշխոյժ բնաւորութիւն ունէր, բայց միևնոյն ժամանակ մտախոհ ու զգայուն էր և գեղեցիկ սրտի տէր. այդ պատճառով նա իր մերձաւորներին օտարոտի էր թւում, իսկ երբեմն էլ աչքի էր ընկնում իր անսպասելի արարմունքներով: Օրինակ՝ մի անգամ ճանապարհին, պօստային կառքերով ճանապարհորդելու ժամանակ, երբ ամենքն

*) «Մանկութիւնը» Տօլստօյի առաջին գրւածքն է, որ տպագրել է 1852 թ. (ուրեմն 56 տարի առաջ), մեծ տպաւորութիւն է արել ընթերցող հասարակութեան վրայ և միանգամից հռչակել հեղինակի անունը: Հայերէն թարգմանել է մեր հանգուցեալ վիպասան Պերճ Պօռեանը, որև տպագրել է նախկին «Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան» հրատարակութեամբ: Մեր պատանիներին խորհուրդ ենք տալիս կարդալ այդ գեղեցիկ գիրքը:

նստել էին կառքերում և պիտի ճանապարհէին, սկսեցին որոնել մանուկ Տօլստօյին, որ նա էլ նստէ: Այդ ժամանակ նա գլուխը դուրս հանեց պօստային կայարանի պատուհանից ու ձայն տւեց. ma tante (հօրաքոյր), ես այս բոպէիս դուրս կը գամ»: Նրա գլխի կէսը խուզւած էր...: Մի քանի բոպէ կանգ էին առել կայարանում, և տարօրինակ մանուկը ուղեցել էր գլուխը խուզել աւելորդ տեղը:

Ինքը Լ. Ն.-ը պատմում է իր ընտանեկան շրջանում, որ մանուկ հասակում, երբ նա եօթ—ութ տարեկան էր, նրա մէջ բուռն ցանկութիւն է ծագում թոչնել օգի մէջ: Նա կարծում էր, թէ դա հեշտ բան է, միայն պէտք է ծալապատիկ նստել, գրկել ծնկները ու սեղմել, և որքան աւելի ուժեղ սեղմես, այնքան աւելի բարձր կը թոչես:

Այդ միտքը հանգստութիւն չէր տալիս նրան, և նա կատարեց իր մտադրութիւնը: Նա փակւեց դասատան մէջ, բարձրացաւ պատուհանի վրայ և իր մտադրութիւնը իսկութեամբ կատարեց: Նա պատուհանից գլուսեց ու վայր ընկաւ գետնին, երկու և կէս սաժէն բարձրութիւնից, ոտքերն վնասեց ու չը կարողացաւ տեղից վերկենալ, որով շատ վախեցրեց իր մերձաւորներին:

Նա նեարդային, ինքնատիպ ու շատ զգայուն մանուկ էր, ցնորքները նա իրականութեան տեղ էր ընդունում և ընդհակառակը՝ իրականութիւնը ցնորքի տեղ: Նա յափշտակւում էր ամեն բանով, և դասատան մէջ նստած՝ մտածում էր, թէ ինչպէս լաւ կը լինէր, եթէ ինքն էլ մեծերի հետ նստած լինէր պատշգամբում, մասնակցէր նրանց զրոյցներին. նա ուզում էր ամենքին դուր գալ, հնարագէտ լինել. տանջւում էր, որ նրան վերաբերւում են իբրև երեխայի, որ նա տգեղ է, մազերը կոշտ ու ցցւած են, քիթը՝ լայն, աչքերը՝ մանր ու մոխրագոյն: Նա շատ վաղ սկսեց, պայքարել իր զգացմունքների հետ և փրկութիւն որոնեց մտորումների մէջ. նա շատ վաղ ծանօթացաւ վշտի հետ ու միշտ անճնատուր էր լինում խորհրդածութիւնների, խորասուզում էր տխրութեան մէջ: Այդ յատկութիւններով նա աչքի էր ընկնում ամբողջ ընտանիքում, և ամենքը նայում էին նրա վրայ, իբրև մի տարօրինակ և արտասովոր երեխայի վրայ:

1840 թ. որբ Տօլստօյների խանամակալուհի նշանակւեց նրանց հօրաքոյր Իւշկօվան, որը որբերին տարաւ

իր մօտ կազան քաղաքը: Իրանով փոխւեց Նասնայա Պօլե-
անայի նրանց պարզ կեանքը. գիւղական առողջ մանկու-
թիւնը վերջացաւ ու սկսեց քաղաքի աղմկալի կեանքը
իր բոլոր պակասութիւններով:

Լ. Ն. Տօլստօյը իրենց ճանապարհորդութիւնը դէպի
կազան և վերջինումս անցկացրած կեանքը նկարագրել է
իր «Պատանեկութիւն» գրքում, որ նոյնպէս թարգմանւած
է հայերէն:

Մինչև այդ ժամանակ մանուկ Տօլստօյը շարունակ իր
մասին էր մտածում և մտորում: Նա ցանկանում էր, որ
ամենքը իր համար ապրեն, իրանով հետաքրքրւեն: Բայց
լինելով վերին աստիճանի սպաւորւող նա այս ճանապար-
հորդութեան ժամանակ յանկարծ տեսնում է բաղմաթիւ
մարդկանց, որոնք ապրում են իրանց հողներով, իրանց
զգացմունքներով ու մտքերով, իրանց առանձնայատուկ
կեանքով, որից, սակայն, այնքան հեռու է ինքը. նա
զգում էր, որ ինքը դեռ պէտք չէ նրանց համար, բայց
գիտակցում էր, որ պէտք է որոշ գիրք բռնէ և յարաբե-
րութեան մէջ մտնէ մարդկանց հետ:

Մանկութիւնը վերջացել էր. նրանից մնացել էին
պայծառ և ուրախ յիշողութիւններ, բայց միայն յիշողու-
թիւններ:

Կազանում սկսեց սրբիշ կեանք: Ըն Նիկօլաեիչին
պատրաստում էին համալսարան մտնելու համար. բայց
նա հիմա էլ, ինչպէս և ապագայում, տարօրինակ էր պա-
հում իրան: Պատանեկութեան հասակում էլ լաջն քիթը,
սգեղ դէմքը և ամբողջ արտաքինը տանջում են նրան
կարծես աւելի՛ քան նոյն իսկ առաջ:

«Ես բնականից ամաչկոտ էի, — ասում է Լ. Ն. Տօլս-
տօյը, — բայց իմ ամաչկոտութիւնն աւելանում էր այն
համոզմունքից, որ ես այլանդակ ու անձոնի եմ: Ես չա-
փազանց ինքնասէր էի արհամարհել բոլոր այն բաւակա-
նութիւնները, որ մարդու տալիս է գեղեցիկ արտաքինը,
և ես լարում էի իմ խելքի և երևակայութեան բոլոր
ուժերը, որ բաւականութիւն գտնեմ հպարտ առանձնու-
թեան մէջ»:

Հօրաքրոջ շրջանում արտաքին ու գեղեցիկ ձևերը
առաջին տեղն էին բռնում, և Լ. Ն.-ի մանկական, պատա-
նեկական և նոյն իսկ երիտասարդական հասակի ինքնա-
տիպ բնաւորութիւնը նրան հանգիստ չէր տալիս. նա հի-

ւանդոտ արամադրութեամբ՝ շարունակ մտածում էր, որ
ինքը սուերի մէջ է, իրան չեն նկատում, չեն երկրպա-
գում, չեն սիրում, որ ինքը դժբաղդ է, — և նա շարունակ
տանջում է իրան այն մտքով, որ ինքը թշւառ որբ է, ու
ինքը իրան մխիթարում է:

«Որ իր դժբախտութեան պատճառը ինքը չէ, այլ իր
ճակատագիրն է այդպէս, որ իր վիճակը նման է թշւառ
մարդու վիճակի»:

Լ. Ն.-ը կամ մտորումների մէջ էր ընկնում և ըստ
երևոյթին հեռանում էր իրական կեանքից, կամ յանկարծ
յիշելով, որ մանր իւրաքանչիւր ժամ սպասում է իրան,
վճռում էր, որ մարդ չի կարող ուրիշ կերպ բաղդաւոր
լինել, եթէ ոչ օգտուել ներկայով. և չը մտածելով ապա-
գայի մասին՝ ամբողջ օրերով դասերը թողնում էր ու
պառկած անկողնի մէջ՝ որ և է վէպ էր կարդում կամ
պրեանիկներ էր ուտում:

Ինչպէս ասացինք, պատանի Տօլստօյը իրան դժբաղդ
էր համարում և յաճախ մտածում էր մահւան մասին.
բայց հօրաքրոջ աշխարհիկ շրջանը նրան գրաւում է դէպի
աշխարհիկ գւարձութիւններ. նա թէև իրան անյարմար է
զգում այդ շրջանում, բայց և այնպէս ապրում է այնպէս,
ինչպէս պահանջում է միջավայրը: Նա զբաղւում է նոյն
իսկ իր արտաքինով, հոգս է քաշում եղունգների երկա-
րութեան ու մաքրութեան մասին, ձևերի գեղեցիկութեան,
զլուխ տալու, պարելու կամ դուրեկան կերպով խօսելու
դատարկ բաների մասին և այլն:

Ուսանող Տօլստօյի կեանքը լի էր երկուութիւնով,
հակասութիւններով և ներքին ու արտաքին կեանքի պայ-
քարով. իր կեանքի այն շրջանի մասին նա գրում է.

«Սարսափելի է յիշել, թէ իմ կեանքի 16-ամեայ
շրջանում որքան անգնահատելի բան եմ գործադրել այդ
յատկութիւնը (այսինքն աշխարհիկ փայլը) ձեռք բերելու
համար. ամենքին այդ բանը, ըստ երևոյթին, հեշտ էր
աջողում: Ես նախանձով էի նայում նրանց և լռիկ կեր-
պով աշխատում էի Փրանսերէնի կամ զլուխ տալու ար-
ւեստի վրայ՝ ուշադրութիւն չը դարձնելով, թէ ում ես
զլուխ տալիս...»:

Համալսարանը շատ քիչ բան է տւել Լ. Ն. Տօլստօյին:
Նա սկզբից մտաւ արևելեան բաժինը և, ըստ երևոյթին,
ուզում էր լրջօրէն պարապել գիտութեամբ, բայց դա

անիրագործելի էր նրա համար: Տնային հանգամանքները և կեանքի պայմանները խանգարում էին նրան լուրջ պարապելու: Նա շարունակ ստիպւած էր մասնակցելու պարահանդէսների, երեկոյթների, կենդանի պատկերների, ներկայացումների, նւագահանդէսների—կամ ընդհանուր նահանգապետի, կամ ազնւականների պարագլխի, կամ ուրիշների մօտ՝ այս կամ այն բարձրաստիճան այցելուների աւելիով սարքած տօնախմբութիւններին: Աղմկալի աշխարհիկ կեանքը հնարաւորութիւն չէր տալիս նրան ուսումնասիրելու արեւելեան լեզուները: Կիսամեայ քննութիւններին նա վատ թւանշաններ ստացաւ. ապա այնքան քիչ էր պարապում, որ թոյլ չըտւին քննութիւն տալու: Միւս տարին նա չուզեց մնալ նոյն կուրսում և տեղափոխեց իրաւաբանական բաժինը, որ դարձեալ նրան շատ քիչ բան տւեց:

Կազանի աշխարհիկ կեանքը նրան զգւեցրեց. համալսարանական գիտութիւնը չէր գրաւում քանքարաւոր ու օժտւած երիտասարդին, որի ուժեղ բնութիւնը ձգտում էր գէպի կեանքի ճշմարտութիւնը:

1847 թ. Տօլստօյը կազան քաղաքից վերադառնում է գիւղ. իսկ 1848 թ. արդէն Պետերբուրգում էր և այնտեղ քննութիւն էր բռնում իրաւաբանական գիտութիւններից: Նա արդէն աջողութեամբ քննութիւն էր բռնել քաղաքացիական և քրէական իրաւունքից, սակայն նրա հոգեկան տրամադրութիւնը անսպասելի փոխւում է. նա քննութիւնները ընդհատում է և նորից վերադառնում Եստրախեա Պոյեմնու, որտեղ մնում է մինչև 1851 թիւը:

Բնութիւնն ու գիւղական կեանքը ամբողջովին կլափնութիւնն ու գիւղական կեանքը ամբողջովին կլանում են նրան. նա գգում է, որ ծնւած է գիւղի համար, նա երիտասարդ է, նա գիտակցում է իր կոչումը—ծառայել ժողովրդին, միշտ բարութիւն անել և սիրել նրան: Նա վճռում է գիւղատնտեսութեամբ պարապել և ազնիւ պարտք է համարում բարւոքել ուսմիկ գիւղացիների, մութիւնների թշուաղութիւնը: Բայց այստեղ էլ բաւարարութիւն չըստանալով իր գիւղական կեանքից և գիւղացիների դրութիւնը բարելաւելու գործում արգելքների հանդիպելով ճորտաիրական պայմաններում, Տօլստօյը 1851 հանդիպելով ճորտաիրական պայմաններում, Տօլստօյը 1851 թիւին գալիս է Կովկաս իր մեծ եղբոր մօտ, որ զինուորական ծառայութեան մէջ էր թնդանօթածիւղ գործում:

Մի առ ժամանակ մնալով եղբոր մօտ՝ նա շուտով

յափշտակում է Կովկասի բնութիւնով և տեղացիների ինքնատիպ կեանքով. մօտ հինգ տարի Պետերբուրգում ապրելուց յետոյ, նա գալիս է Քիֆլիս, քննութիւն տալիս և ինքն էլ զինուորական ծառայութեան մտնում, նոյնպէս ուժեղ գործի մէջ, և մասնակցում է լեռնցիների հետ ունեցած բազմաթիւ ընդհարումներին:

Փառահեղ և անսովոր բնութեան ազգեցութեան տակ՝ երկու եղբայրների մատաղ ուժերը, ելք որոնելով՝ ընթացան ստեղծագործութեան ճանապարհով, և Լ. Ն.-ը 1852 թիւին գրեց իր առաջին վէպիկը—«Մանկութիւնը», որին անյապաղ յաջորդեցին «Կարամատիրոջ առաւօտը», «Գէպը», «Պատանեկութիւնը»: Բացի դրանցից՝ նախագծւեցին «Կազակները», «Երիտասարդութիւնը»:

Առաջին գրածքները սպազրեցին նշանաւոր բանաստեղծ Նեկրասովի «Современник» ամսագրում Լ. Ն. ստորագրութեամբ: Այդ գրածքները միանգամից գրաւեցին հասարակութեան ուշադրութիւնը և արժանացան քննադատների ու հեղինակների գովասանքին. օրինակ՝ Ֆ. Մ. Դոստօեւսկին՝ կարդալով «Մանկութիւնը» և «Պատանեկութիւնը», հիացել էր և թախանձադին խնդրում էր իր ծանօթներին, որ յայտնեն, թէ ով է թագնւած Լ. Ն. տառերի տակ:

Ինչպէս ասացինք, Տօլստօյի առաջին գրածքը լոյս տեսաւ 1852 թ. սեպտեմբերի 1-ին, երբ հեղինակը 24 տարեկան էր:

Այդ ժամանակ նա մտորում էր թէ գրական և թէ զինուորական փառքի մասին և միեւնոյն ժամանակ լուրջ մտածում էր ձուլել հասարակ ժողովրդի հետ:

Նա ապրում էր հասարակ կազակների մէջ, մի ստանիցայում (կազակների գիւղ), որ գտնւում էր Թերեք գետի ձախ ափին, Ղզլար քաղաքի մօտ. այստեղ նա երբեմն որսորդութեամբ էր պարապում, Փասիան (միրճաւ) կամ վայրի խոզ էր որսում, թափառելով անտառների և ճահիճների մէջ և շատ անգամ յիշելով իր համար զգւելի դարձած աշխարհիկ պարերեկոյթներն ու խրախճանքները: Լ. Ն.-ը այստեղ ժամանակը անց էր կացնում բնութեան ծոցում. հսկայական լեռնաշղթայի սաւերներում. նա համակում էր վսեմ բնութեան գեղեցկութիւնով:

Նա յետոյ հրճւանքով էր յիշում այդ ժամանակը և ստում էր:

«Պէտք է ճաշակել կեանքը իր անարեւատ գեղեցկութեամբ, որ կարելի լինի ըմբռնել երջանկութիւնը: Սակայն ի՛նչ է երջանակութիւնը: Լինել բնութեան ծոցում, տեսնել նրան, խօսել նրա հետ, չըմտածել վաղան մասին, մեռնել այնպէս, ինչպէս թառամած տերեր ընկնում է ծառից՝ հետք ու յիշողութիւն չըթողնելով իրանից յետոյ»:

Սյդ պարզ ու բնական կեանքը բնութեան ծոցում, ի հարկէ, շատ գրաւիչ էր, ինչպէս յուզած հոգին հանգրտացնող, մտքի ու սրտի տանջանքները մեղմացնող մի միջոց, բայց ի՛նչպէս հաշտեցնել Տօլստոյի մտորումները, փառքի, իշխանութեան կամ մերձաւորների ու ամբօխի հրճանքի և երկրպագութեան հետ. նրա տաղանդի կամ քաջ ու անվեհեր մարտիկի հերոսական սխրագործութիւնների առաջ, որ ձգտում ու մտորում է Դէորգիեւսկի խաչով իր կուրծքը զարգարելու, որպէսզի ծանօթ-անծանօթ իմանան, որ նրանց առաջ կանգնած է ո՛չ թէ մի հասարակ մահկանացու, այլ հերոս... Եւ Լ. Ն.-ը, ինչպէս ասում է իր յիշողութիւնների մէջ Բէրսը, «բուռն կերպով ուզում էր Դէորգիեւսկի խաչ ստանալ և նոյն իսկ առաջարկել էր այդ նպատակով, բայց չի ստացել մերձաւոր իշխանաւորներից մէկի պատճառով, որ վատ էր տրամադրւած գէպի նա: Սյդ բանը վշտացրեց նրան և միևնոյն ժամանակ փոխեց նրա հայեացքը քաջութեան մասին. նա այլևս քաջ չէր համարում այնպիսիներին, որոնք ճակատամարտի ժամանակ առաջ են անցնում և ձգտում են պարզենքի. նա քաջութիւն է համարում միայն խելացի վերաբերմունքը գէպի փոսնոր»:

1853 թւի սկսւեց Ղրիմի պատերազմը, և Լ. Ն. Տօլստոյը հէնց պատերազմի սկզբից տեղափոխւեց Դանուբեան զօրաբանակը: 1854 թւի նոյեմբեր ամսին նա եկաւ Սեւաստօպօլ քաղաքը, որտեղ մնաց մինչև այդ քաղաքի պաշարման վերջը:

1855 թւի մայիսին Լև Նիկօլայեւիչը նշանակւեց մի լեւնային զօրամասի հրամանատար և բուռն մասնակցութիւն ունեցաւ մի դժբաղդ ճակատամարտի, որ տեղի ունեցաւ օգոստոսի 11-ին Սև գետակի մօտ:

Նա սպասում էր, թէ իրան կը պարզեաւորեն այդ գէպքի համար և մտորում էր նոյն իսկ Փլիգել ադիստանտի կոչման մասին, ինչպէս ասում է նրա կենսագիրներից

մէկը: Բայց այս անգամ էլ նրա յոյսը չիրագործւեց:

Լ. Ն. Տօլստոյը թէ կովկասում և թէ Սեւաստօպօլ եղած ժամանակ յայտնի էր իր անվեհերութեամբ:

Սեւաստօպօլի նրա պաշտօնակիցներից մէկը հետևեալն է պատմում. «Տօլստոյն իր պատմւածքներով ամենքին ոգևորում էր ռազմական կեանքի դժւար բողէներին. նա մեր հասարակութեան հոգին էր բառի բուն մտքով: Քանի որ Տօլստոյը մեզ հետ էր, — մենք չը գիտէինք, թէ ժամանակակից ինչպէս է անցնում. հէնց որ կոմսը շէր լինում, բոլորը քթերը կախում էին: Նա հազաւագիւտ ընկեր ու ազնիւ հոգի էր և անկարելի է նրան մոռանալ»:

Զննյաժ պատերազմի պատճառած նեղութիւններին ու զրկանքներին, Լ. Ն. Տօլստոյը կարողանում էր դեռ ստեղծագործական աշխատանքով էլ պարապել. նա այստեղ գրեց մի շարք պատմւածքներ՝ «Սեւաստօպօլեան պատմւածքներ» ընդհանուր խորագրով, որոնք մեծ հուշակ ստացան: Նրա կենսագիրներից մէկը հաղորդում է, որ կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնան, ակնաստեսների ասելով, Տօլստոյի առաջին Սեւաստօպօլեան պատմւածքը կարգալիս ժամանակ լացել է, իսկ կայսր Նիկօլայ I հրամայել է:

«Պահպանել երիտասարդ գրողի կեանքը և նրան 4-րդ բատարէյից փոխադրել աւելի ապահով տեղ»: 1855 թւին, Սեւաստօպօլի գրաւումից յետոյ՝ Տօլստոյն ուղարկւեց Պետերբուրգ, իբրև սուբհանդակ: Դրանով էլ վերջացաւ նրա զինուորական ծառայութիւնը:

Զինուորական կեանքը Տօլստոյին մօտեցրեց, հարազատ զարձրեց հասարակ ժողովրդի հետ ի գիմաց ուսւ զինուորի: Տեսնելով, թէ ինչպէս պարզ, բայց և վսեմ է հասարակ ուսւ մարդը, ինչպէս նա անվեհերութեամբ գնում է գէպի մահը՝ — նա շերմագին և բուռն կերպով սիրեց ժողովրդի հոգին ու խոնարհւեց նրա գեղեցկութեան առաջ և գէպի ժողովուրդն ունեցած հաւատը ընդմիշտ ամրացաւ նրա սրտի մէջ:

Ինչպէս ասացինք, 1855 թւին Տօլստոյը գնաց Պետերբուրգ: Այսպիսով 27-ամեայ սպան, հերոսը և արդէն յայտնի հեղինակը պատերազմական բեմից միանգամից ընկաւ մայրաքաղաքի փայլի և ազմկալի կեանքի մէջ: Այն ժամանակ էլ նրա վրայ նայում էին, ինչպէս Ռուսաստանի պարծանքի վրայ, որ մեծ յոյսեր էր տալիս:

Ամեն տեղ նրան ընդունում էին, գուրգուրում, խնամում: Եւ նա, իբրև նեարգային և տպաւորող երիտասարդ, յափշտակում էր ամեն բանով, բայց միևնոյն ժամանակ, իբրև ստեղծագործող տաղանդ, խորը թափանցում էր ամեն մի երևոյթի մէջ. երկար մտածելուց յետոյ՝ եկաւ այն եզրակացութեան, որ Պետերբուրգը իրան յարմար չէ:

Եւ նա չընայած սիրալիր ընդունելութեան և այն ժամանակի խոշոր գրողների Գրիգորովիչի, Գօնչարովի, Տուրգենևի, Օստրովսկու, Նեկրասովի, Պանաեւի և այլոց բարեացակամ վերաբերմունքին՝ Պետերբուրգից տեղափոխեց Նասնայա Պոլեանա, որտեղ գտնուում էին իր եղբայր Նիկոլայը և քոյր Մարիան:

Այստեղ նա սկզբից մարմնամարզութեամբ էր պարապում ինչպէս և առաջ, բայց օր-օրի վրայ, կամաց-կամաց նա սկսեց զիւղատնտեսութեամբ պարապել, ինչպէս պարապում են զիւղացիները:

Տօլստոյը մի առանձին յափշտակութեամբ է խօսում հողը վարելու, հերկելու մասին:

Արօրի մածը բռնած աշխատել! Դուք չը գիտէք, թէ ինչ մեծ բուսականութիւն է պատճառում վարելը: Ծանր գործ չէ, ինչպէս շատերին թւում է: Գտնում ես, վեր բարձրացնելով, կառավարելով արօրը՝ եւ չես նկատում, թէ ինչպէս անցնում են ժամերը մէկը միւսի ետեւից: Արիւնը ցնցազին հոսում է մարդու երակներում, միաքը պայծառանում, իսկ ինչպէս ախորժակ է ունենում մարդ, ինչպէս քնում է»:

Տարւելով զիւղատնտեսութեամբ և վարուցանքով՝ Տօլստոյը պարապում էր նաև որսորդութեամբ, որ սալիս էր նրան հոգեկան կորով ու թռիչք, և որի ժամանակ նա երբեմն ենթարկւում էր գրաւիչ վտանգների, ինչպէս, օրինակ, արջի յարձակման և այլն: Նա յետոյ իր գրեածքների մէջ շատ գրաւիչ էջեր է նւիրել իր որսորդութեանը:

Այդ ժամանակ կապեր էր հաստատել իր զրացի կարածատէրերի հետ. բացի զրանից՝ նրա մօտ շատ անգամ հիւր էին գալիս Նասնայա Պոլեանա նաև Պետերբուրգի իր բարեկամները—զանազան գրողներ:

Գիւղը, զիւղատնտեսութիւնը, որսորդութիւնը, բարեկամական յարաբերութիւնները և բուռն կերպով սիրւած

ընութիւնը արթնացնում էին նրա եռանդը և մղում էին զէպի ստեղծագործական աշխատանք. և այդ ժամանակ նա գրեց բազմաթիւ նշանաւոր պատմեածքներ ու վէպիկներ, որոնք ամեն հասակի ընթերցողներին ուշադրութիւնն են բեռում իրանց վրայ:

50-ական թւականների վերջին վտանգաւոր կերպով հիւանդացան նրա սիրելի եղբայրն ու քոյրը. նրանք բժշկւում էին արտասահմանում, որտեղ գնաց նաև Լ. Ն. Տօլստոյը:

Եղբայրն ու քոյրը վախճանեցին: Տօլստոյը շատ վշտացաւ նրանց մահով:

«Ո՛չ մի բան այսպիսի ազդեցութիւն չէր արել ինձ վրայ—գրում է նա.—ճշմարիտ էր ասում եղբայրս, թէ մահից վատ ոչինչ չը կայ»:

Տօլստոյն արտասահմանում եղել է 1857 և 1860—1861 թւերին. նա խորագնին կերպով դիտում էր այնտեղի կեանքը, մանաւանդ ուսումնասիրում էր դպրոցը և դպրոցական կրթութիւնը:

1858 թւին նա զիւղական մանուկների համար դպրոց հիմնեց Նասնայա Պոլեանայում, որ ապագայում մեծ հռչակ ստացաւ:

Նա այստեղ հրատարակեց իր նշանաւոր ամսագիրը «Նասնայա Պոլեանա» անունով, գրեց բազմաթիւ մանկավարժական յօդածներ, իսկ յետոյ կազմեց այբբենարան և ընթերցանութեան գրքեր:

Տօլստոյն այդ ժամանակ գրում էր յայտնի բանաստեղծ Փէտին:

«Ես դպրոց եմ հիմնել... մենք բոլորս սովորեցնում ենք և ամենքս էլ գոհ ենք: Ես իմ այբբենարանը վերջացրի... Իմ այբբենարանը ինձ հանգստութիւն չի տալիս և չի թողնում ուրիշ գործով զբաղելու: Նրա տպագրութիւնը կրիայի քայլերով է առաջ գնում, և չը գիտեմ, երբ կը վերջանայ: Իսկ ես գեռ աւելացնում, պակասեցնում և փոփոխում եմ: Թէ ինչ դուրս կը գայ նրանից—չը գիտեմ, բայց ամբողջ հոգիս դրել եմ մէջը»:

Ճորտութեան վերացումից յետոյ Տօլստոյը հաշտարար միջնորդ նշանակեց, յետոյ զեմսկի իրաւասու ընտրեց: Նա ամբողջովին նւիրեց այդ գործին. ձգտում էր կենդանութիւն մտցնել ու ծառայիլ այն ճշմարտու-

գրողները համար տարւայ մէջ որոշ ժամանակ, որոշ ամիսներ կան ստեղծագործութեան համար: Պուշկինը, Գոգօլը և ուրիշներ աշխատանքի անձնատուր էին լինում որոշ ժամանակներում: Տօլստօյն ասում է. «Ձմեռւայ վերջը և գարնան սկիզբը իմ եռուն աշխատանքի ժամանակն է»:

Տօլստօյն իր երկար կեանքի բոլոր շրջաններում միշտ սիրում էր պարապել լեզուների ուսումնասիրութեամբ: Այսպէս, օրինակ, 1870 թւականի վերջին, 42 տարեկան հասակում, նա սկսում է ուսումնասիրել յունարէնը և այդ առիթով գրում է *Ֆէտին*. «Առաւօտից մինչև երեկոյ սովորում եմ յունարէն: Անհաւատալի է թէև, բայց ես հիմա ազատ կարգում եմ Քսէնօֆօնտին: Հոմերոսի համար բառամթերք է պէտք և մի քիչ աւելի ուշադրութիւն: Բայց որքան ես երջանիկ եմ... Առաջինը՝ ես մեծ բաւականութիւն եմ ստանում. երկրորդ՝ ես եկայ այն համոզմունքի, որ լեզուի արտայայտած գեղեցկութիւնները ես մինչև հիմա չը գիտէի, ինչպէս ամենքը, — շատ անգամ թէև գիտեն էլ, բայց չեն հասկանում: Առանց յունարէն լեզուի գիտութեան՝ կրթութիւն չը կայ»... Այդ միևնոյն ժամանակ նա կարգում է խօսքի մեծագոյն վարպետների գրածքները: Փէտին գրած նոյն նամակում նա աւելացնում է. «Ես շատ եմ կարգացել Շէքսպիրից, Գէօթէից, Պուշկինից, Գոգօլից, Մօլիէրից, որոնց մասին շատ բան եմ ուզում ասել ձեզ... Շատ եմ ուզում խօսել շատ բան եմ ուզում ասել ձեզ... Շատ եմ ուզում խօսել Շէքսպիրի, Գէօթէի և ընդհանրապէս դրամայի մասին»: Վերջը աւելացնում է. «Ամբողջ ձմեռւայ իմ գլարճութիւնս է. պառկել, քնել, ոտնասահնակներով սահել, իսկ ամենից շատ պառկում եմ անկողնում, և դրամայի կամ կոմեդիայի անձերը սկսում են գործել իմ առաջ. և շատ լաւ են ներկայացնում»:

1871 թւի ամառը Տօլստօյ անցկացրեց Սամարայի նահանգում, բաշկիրների մէջ: Նա հասարակ բաշկիրական վրանում յունարէն կարգում էր Հերոգոտը՝ աւելի և ավելի տարւելով այդ լեզուով: Միևնոյն ժամանակ նա մօտիկից գիտում էր բաշկիրների կեանքը: Այդ առիթով նա գրում է *Ֆէտին*:

«Թէ ինչի՞ համար ճակատագիրը ինձ գցեց այնտեղ, չը գիտեմ... Ճանձեր, անմաքրութիւն, ռամիկ բաշկիրներ, իսկ ես ուշադիր յարգանքով եւ երկիւղածութեամբ լսում եմ, նայում եւ զգում, որ այդ բոլորը շատ կարեւոր է»:

Դա բնորոշ մի գիծ է Տօլստօյի բնաւորութեան մէջ. նա միշտ որոնել է և որոնում է կարեւորը և ամեն տեղ գտել է ու գտնում է: Նա կարեւոր բան է գտնում նաև թափառող բաշկիրների կենցաղում, որոնք ապա հերոսներ դարձան նրա մի քանի պատմւածքների համար:

Տօլստօյի կեանքի և գործունէութեան վերջին շրջաններում նրան առանձնապէս զբաղեցնում են փրկիսօփայական, բարոյագիտական, կրօնական, նաև կեանքի և մահւան վերաբերեալ հարցեր. նա խորասուզում է այդ հարցերի վերաբերմամբ խոր մտածմունքների մէջ, միևնոյն ժամանակ չը մոռանալով իր մեծ արեստը, — այն է՝ ստեղծագործական հանձարով նկարագրել մարդկային կեանքն ու հոգին և միշտ քննելով նրանց ճշմարտութիւն որոնողի տեսակէտից:

Նա միշտ «ուզեցել է բարոյապէս աւելի լաւ լինել», միշտ ձգտել է այդ բանին, և մինչև մահն էլ գնացել իր առանձին հոգեկան ճանապարհով, ինչպէս առանձին հոգեկան յատկութիւնների տէր և հանձարեղ մի մարդ, որին սահմանւած է գնալ ժամանակակից հասարակութեան առաջից և նոր ճանապարհներ բանալ — թէ իր համար և թէ այն հասարակութեան համար, որի գլուխ է է եղել նա կանգնած շատ տասնեակ տարիներ:

Այդպէս է եղել նա երկար կեանքի ընթացքում. նա միշտ առաջնորդել է՝ չը հետևելով, չը նմանելով ոչ ոքի: Ինչպէս ասում է Ֆրանսիական բանաստեղծ Միւսէն, նա իր ստեղծագործութեան մէջ խմել է ու խմում է իր մեծ բաժակից, որին տիրապետում է, ինչպէս պէտք է: Այդպէս էին նայում նրա վրայ նաև եղբայրակից ոուս մեծ արեստագէտ հեղինակները: Տուրգենևը իր նամակներում շատ բարձր է գնահատում Տօլստօյի տաղանդը: 1856 թւին նա ասել է նրան. Դուք հեռու կը գնաք»: Աւելի ուշ՝ խօսելով համաշխարհային գրականութեան մասին՝ նա գրում է Տօլստօյի մասին:

«Մենք վաղուց գիտենք, որ նա մրցակից չունէ»: Իր մահւանից առաջ Տուրգենևը դիմեց Տօլստօյին մի սրաաշարժ կոչով, իր վերջին խնդրով.

«Իմ բարեկամ, վերադարձէք դէպի գրական գործունէութիւն! Իմ բարեկամ! ոուս աշխարհի մեծ գրող, լսեցէ՛ք իմ խնդիրը!»:

Տօլստօյը գնահատում էր Տուրգենևին, թէև նրանց

յարաբերութիւնները երբեմն բարեկամական չեն եղել. նա ասում էր, թէ իր համար թանկ է Տուրգենևի կարծիքը, որ «նա կը հասկանայ»:

Տօլստօյի կենսագիրներէից մէկը շատ ճշմարիտ է ասում, որ «մի հայեացք ձգելով Տօլստօյի բազմազան գործունէութեան վրայ նրա ժամանակակից սերունդները պիտի շնորհակալ լինին ճակատագրից այն բոլորի համար, ինչ որ տւել է մեծ արեւստագէտի գործունէութիւնը»....:

1908 թ. օգոստոսի 28-ին լրացաւ այդ մեծ մարդու ծննդեան 80 ամեակը, և այդ առիթով լուսաւոր մարդկութիւնը, յարգանքներ մատոյց Տօլստօյին և նրա գաղափարներին: Այդ մտքի և գրականութեան յաղթանակի տօնախմբութիւնն էր:

Ներկայ տարւայ հոկտեմբերի 28-ին վաղ առաւօտեան Տօլստօյն իր Եսանայա Պօլեանայից ճանապարհ ընկաւ դէպի յաւիտենականութիւն: Ծանապարհին Տօլստօյն այցելեց իր հազատ քրոջը՝ կոմսուհի Մարիա Նիկոլանային, որ Եամարդիւնի վանքում միանձնուհի է և հետևեալ օրը շարունակելով ուղին, տկար մարմինը կանգ առաւ մի քանի օր Աստապօլօ աննշան երկաթուղային կայարանում: Աշխարհի աչքերը յառեց դէպի մեծ ուղևորը: Շրջապատեցին հարազատներն ու աշակերտները նրան: Հրաժեշտի ողջոյն տւաւ և հետևեալ առաւօտ, կիրակի, 1910 թ. նոյեմբերի 7-ին ժամը 6-ին հողին պաղաւ երկինք:

Խոր սգի մէջ ընկաւ մտաւոր աշխարհը և յաւերժ յիշատակ երգելով հազարաւոր մարդիկ պարզ կաղնի դազադում աճիւնը տարան և երեքշաբթի, նոյեմբերի 9-ին, պահ տւին իր սիրած ծննդավայր Եսանայա Պօլեանում, Բլրի վրայ, եօթ լորիների մէջ տեղը:

Տօլստօյի մարմինն ամփոփւեց քաղաքացիական ծէսով, առանց քահանաների: Սակայն հայ եկեղեցին կատարեց նրա յիշատակին, հէնց մահւան օրը, Մօսկւայի հայ եկեղեցում հոգեհանգիստ և հայերի անունից պսակ դրեց նրա գերեզմանին:

Հայոց կաթողիկոսը շրջաբերական հեռագրով թեմական բոլոր առաջնորդներին հրահանգեց ամենուրեք թոյլատրել կատարել Տօլստօյի յիշատակին հոգեհանգիստներ: Մենք էլ գլուխ խոնարհեցանք Ռուս աշխարհի մեծ բողոք, անմահ մարդու յիշատակի առաջ և ցանկանք իրագործւած տեսնել համամարդկային գաղափարերը:

ԲՈՅՈՒՆ Է 1911 թ. ԲԵԺԵՆՈՐԳԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ IX ԱՂԲԻԻՐ ԵՒ ՏԱՐԱԶ № XXI

ՊԱՏԿՆՈՒ ԱՂԱՐԴ ՀԱՆԳԷՍՆԵՐԻ

Հրատարակում են ճոխ, բազմաբովանդակի մասնակցութեամբ և եւրոպական յայտնի գրականագէտների, մանկագրիչների և արեւտաագէտների:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԵՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ

- I. ԱՂԲԻԻՐ պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելածով:
- II. ՏԱՐԱԶ պատկերազարդ հանդէսը «Քաարն և Երածշուտ» թիւն յաւելածով:
- III. ԱՌՈՂՋԱԳԱՀ պատկերազարդ ամսաթիւրժը «Հոգու և Մարբիտողջութիւնը» յաւելածով:
- IV. ԱՂԲԻԻՐԻ ԱԿՈՒՆՔ III և IV պրակներ.
- V. ԳԵՂԱՓԵՂԻԿ ՕՐԱՅՈՅՑ 1912 թ.
- VI. ԱՐՈՋԱ. Fantasia իրականութիւնից:
- VII. ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, շքեղ նկար ազակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցրած թէ սեղանի վրայ դնելու և թէ պատից կախելու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՂԲԻԻՐ տարեկան 3 ռ. Արտասահման. 5 ռ. Գործչական աշակերտների հասցելով 1 ռ.
 ԱՌՈՂՋԱԳԱՀ » 2 ռ. (Արտասահման. 3 ռ.) 1-50 կ.
 ԱՂԲԻԻՐ և ԱՌՈՂՋԱԳԱՀ 5 ռ. (Արտասահմ. 7 ռ.) 2 ռ.

ԱՂԲԻԻՐ, ԱՌՈՂՋԱԳԱՀ
 ԱՂԲԻԻՐԻ ԱԿՈՒՆՔ
 ԳԵՂԱՓԵՂԻԿ-ՕՐԱՅՈՅՑ
 ԱՐՈՋԱ, ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

10 Ր. Արտասահմ.
 18 Ր. կամ
 50 Ֆր.
 5
 Գործչ. աշակ. համար 2229 Ր.

Բոլոր յաւելածներով և պրէմիաներով
 Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունուում.
 Այն դպրոցները, որ 50 բաժանորդ կրտան Աղբիւրին, նրանց կուզարկի 5 օրինակ Աղբիւր չքաւոր աշակերտների համար:
 Հասցէն Тифлис. Редакция «АГБИОР» կամ «ТАРАЗ»
 Tiflis, (Caucase) Direction „Agbür“ կամ „Taraz“

Խմբագիր-հրատարակիչ՝ ՅԻԴԲԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ



